

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆՔԻՊ, ՅՈՒՆՈՒԱՐ 11, 1930

ԹԻԻ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ

ՏՐ. Ճ. Ի. ՄԷՐԻԼ

ՕՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՐՀԸ

ՏՕՔԹ. Ա. ՃԴԷՃԵԱՆ

Ս. ԳՐԲԻ ՀԵՂԻՆԱԿԸ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՂԱԶԱՆՔ ՄԸ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՒԷՃ» ՀԱՆՔԻՊ

ԲՈԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԷ՝ “ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”, Ի.

ՏԱՐԱԾԷ՝ “ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”, Ը,

ԾԱՆՈԹԱՑՈՒՐ “ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”, Ը,

ՆՈՒՐԷ՝ “ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ”, Ը

ԳՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՄԷ.

Տարեկան բաժնեգինն է Սուրիոյ համար 1.50 սուրիական ոսկի (բղքադրամ), արժասահմանի համար 1.50 տոլար: Մեկէ աւելի բաժանորդագրութեանց համար մասնաւոր զեղչ. պայմանները հասկնալու համար դիմել հետեւեալ հասցեին.—

“NOR AVEDAPER”, B. P. 287, Alep, Syrie

ՎԵՏԱՄՍԵԱՅ ԲՈԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Զ՛ԸՆԴՈՒՆՈՒՐ.

«ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ»

ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒՈՂ ԹԵՐԹԵՐ

1.—ԲԱԶՄԱՎԷՊ, բանասիրական—գիտական—բարոյական ամսաթերթ, Մխիթարեան Միութեան ի Վենետիկ.

2.—ԲԱՆԲԵՐ, հոգեւոր Ամսաթերթ, Մարտիկա.

3.—ԵՓՐԱՏ, ազգային—քաղաքական, կը հրատարակուի շաբաթը երկու անգամ, Հալէպ.

4.—ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ, հայագիտական Ուսումնաթերթ, հրատարակուի իւր Մխիթարեան Միութեան ի Վենետիկ.

5.—ՀՐԵՂԷՆ ՍԻՒՆ, հոգեւոր պարբերաթերթ, Գահիրէ.

6.—ՄԱՐԱՆԱԹԱ, հոգեւոր ամսաթերթ, Հալէպ.

7.—ՈՐԲԱՇԽԱՐՀԻ ԱՍՏՂԸ, հանդէս ամսօրեայ Մ. Ա. Որբ. Ընդհ. Միութեան, Պէյրութ.

8.—ՍԻՈՆ, հայ ամսագիր, կրօնական—գրական—բանասիրական, հրատարակուի իւր Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան.

9.—ՓԱՐՈՍ Հայաստանեայց, ամսաթերթ Հայ Եկեղեցասիրաց Միութեան, Ֆրէզնօ.

10.—ՓՐԿՈՒԹԻՒՆ, հոգեւոր ամսաթերթ Ֆրէզնօ.

11.—ՅՕՂ, Հայ հոգեւոր երջտասարդաց օրկան, Մարտիկա.

12.—THE NEW ARMENIA, Հայ Դատին նուիրուած պարբերաթերթ, Նիւ Եօրք.

13.—LE COURIER DE SYRIE, քաղաքական շաբաթաթերթ Հալէպ.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, ՅՈՒՆՈՒԱՐ 11, 1930

ԹԻԻ 1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՂ ՔՐԻՍՏՈՆԵՍԻԹԻԱՆԸ

Ազգային կրօնքը իր տեսական մէջ ամենատաժանն է։ Դուռն անոր մէջ կը ծնիս, եւ աշխարհ գալէ վերջ անիկա միշտ քու սեպհականութիւնդ է։ Դուռն գրեթէ չեա կրնար կորսնցնել զայն։

Ազգային կրօնքէն վերջ, աժանագոյնն է եկեղեցապաշտ կրօնքը, որուն էական յատկանիշն է կրօնական դասի մը գոյութիւնը եւ պահպանումը եւ անոնց կողմանէ եկեղեցիի կառավարումը։ Այսպիսի կրօնական հաստատութիւն մը պահելու համար մեծ գումարներ կրնան գործածուիլ, անոր պատկանող անհատէն քիչ կամ ոչ մէկ հոգեւոր գործունէութիւն պահանջուի։

Ծիսապաշտ կրօնքը նախկիններէն աւելի պահանջներ ունի իր հետեւորդէն։ Ան պէտք է ներկայ գտնուի արարողութիւններուն, պէտք է անձամբ կարգ մը ծէսեր կատարէ։ Բայց ասոնց մասնակցիլը դիւրութեամբ կրնայ արտաքին արարք մը ըլլալ, առանց ներքին կեանքի ունէ մէկ ճիգ թափելուն։

Այն մէկ կրօնական կազմակերպութիւնը, որ վարդապետութիւններուն ընդհանուրին կողմանէ ընդունելութեան վրայ հաստատուած է, աւելի բարձր պահանջ կը ներկայացնէ։ Միտքը պէտք է գործէ, ներքին մարդը բան մը պէտք է կատարէ, կամ պէտք է բան մը կատարած ըլլալ խոստովանի, թէպէտ այն միայն մտային շարժում մը կրնայ ըլլալ։ Մարդ մը այսպիսի կրօնական ընկերութեան մը մէջ չի կրնար ծնիլ։ Ա-

նիկա պէտք է խոստովանի թէ ինք անոր մէկ հետեւորդն է, եւ պէտք է այս կրօնքը իւրացնէ իր իսկ արարքով։

Կրօնք մը որ որոշ օրինակի մը համաձայն վարք ու բարք կը պահանջէ մարդու մը կեանքը աւելի զօրաւոր կերպով կը գրաւէ։ Ան պէտք է թողու իրեն հաճելի բաները. ան պէտք է կատարէ ինչ որ ինք չի փափաքիր։ Ան պէտք է փոխէ իր հին ապրելակերպը։ Անփոփոխ կը մնայ օրինքը, որուն հեղինակութեան առջև պէտք է խոնարհի հաւատացեալը։ Այսպիսի կրօնք մը խիստ է։ Քրիստոնէութիւնը իր հետեւորդներէն մեծ պահանջներ ունի իրենց գործնական կեանքին մէջ։ Շատ սուղ է թէ մտքի և թէ գործի մէջ քրիստոնեայ ըլլալ։

Բայց այն կրօնքը, որուն չափանիշերը ներքին են և ոչ արտաքին, որ մարդը կը հրաւիրէ Աստուածային Անձի մը կատարելապէս հաւատարիմ գտնուելու, կրօնքի այս բոլոր տեսակներէն աւելի սուղ մէկն է։ Մէկը կ'սկսի այս բարձրագոյն հաւատարմութիւնը գործադրել, երբ ինքզինքը— իր միտքը, հոգին և մարմինը— բոլորանուէր իր Տիրոջ կը յանձնէ։ Ան իր «ես»ը կը մոռնայ և Դրիստոսը կ'ընդունի իր ներքին կեանքին իբր ճշմարիտ «ես»ը։ Կեանքի վերահսկողութիւնը, ուղղութիւնը անոր յանձնուած է։ Այս քրիստոնէութիւնը շատ սուղ է, քանզի ան կը պահանջէ ինչ որ մարդը ունի և ինչ որ է։ Ոչ մէկ-բան անոր չափ սուղ կրնայ ըլլալ։

Ո՞րը կը նախընտրենք մեզի համար, —այն կրօնքը որ աժան է թէ ոչ այն որ ամենասուղն է։

Ճ. Է. ՄԷՐԻԼ

ՇՈՂԵՐ

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Սկովտիոյ եղբայրքը պատշաժի ելած զբօսանաւ մը սաստիկ փոթորիկի կը բռնուի: Ղեկավարը նաւը կ'ուղղէ գէպի փոքր նաւահանգիստ մը, որ իրենց մէջ փարսախներով հեռու կը գտնուէր: Մութին մէջէն, սաստիկ հովի և կատաղի ալիքներու ենթակայ այս փոքր նաւը վերջապէս խաղաղ ջուրի մէջ կը խաւըսէ. ամէն ոք ա'լ ինքզինքը ապահով զգալով անկողին կը մտնէ: Երբ լոյսը կը ծագի նաւին տէրը իր շուրջը կը զիտէ և կը տեսնէ որ կապոյտ և կարմրագոյն լեռներով շրջապատուած փոքր նաւահանգիստի մը մէջ կը գտնուին, ծովուն կապուած ըլլալով նեղ անցքով մը, որուն յատակը դուրս ցցուած խութերով ծածկուած էր: Նաւատէրը մեծ զարմացումով զեկավարին կը դառնայ ու կ'ըսէ. «Մութին մէջ մենք ա'յս նեղուցէն անցանք, որուն այդ սուր ժանիքներով խութերը միայն շատ զուրու թեամբ կրնային փշրել մեր փոքր նաւը»:

Ասիկա շատ լուս կը բացատրէ մարդկային կեանքը: Շատ անգամ մեզի մեծ զարմացում կը պատճառէ թէ ինչպէս կրցած ենք վտանգաւոր օրերու մէջէն ապահով անցնիլ, երբ յետապարձ ահանաբի մը նեղուց անոնց վրայ: Որչափ պարտական ենք փառք տալ այդ կարող ձեռքին, որ անտեսանելի կերպով մեզ առաջնորդած է:

2721 ՕՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Գործիայի մէջ կարգ մը անձեր ուխտած են ժամանակ տալ Քրիստոսը չը ճանչցողներուն Աւետարանը քարոզելու և բաշխելու համար: Վաճառական մը խոստացած է ամէն ամիս շաբաթ մը տալ, իսկ կոյր մը՝ 90 օր: Խոստացուած օրերուն գումարը եղած է 2721 օր:

ԲՐՈՒՏԻՆ ԶԵՌՔԻՆ ՄԷՋ

Միսիօնար մը այցելութիւն մը կուտայ իր երիտաւորագութեանը առանձնահատկ եղած բրուտի մը տունը, ուր ապակիէ պահարանի մը մէջ երկու շատ գեղեցիկ ծաղկամաններ իր ուշադրութիւնը կը գրաւեն:

— Կարծեմ ասոնք շատ արժէքաւոր պէտք է ըլլան, ըսաւ միսիօնարը, արդեօք քանի՞ կ'ուզէ՞ք զանոնք ծախել:

— Աշխարհիս մէջ գտնուած բոլոր գրաւները, պատասխանեց բրուտը, անկարող են զիս փորձանքի մատնել առնուցմէ ունէ մէկէն բաժնուելու համար: Տարիներ առաջ ես գինեմու և խաղամու մէկն էի: Սը մը արթնութեան ժողովի մը մէջ ներկայ գտնուեցայ, Թրեցի (չաղեցի) և կաղապարեցի զայն, և ապա գուրգի (բրուտի անիւ) յանձնեցի, որմէ յառաջ եկան այս գեղեցիկ ծաղկամանները: Անմիջապէս խորհեցայ թէ Աստուած ալ կրնայ այսպէս ձեռք ինծի, Անոր ձեռքերուն յանձնուեցայ, և Այն զիս նոր մարդ մը ըրաւ:

ՇԱՀԱԿԻՑ ՄԸ

Պեղծութի մէջ ծխնելոյծ մաքրող տղայ մը կիրպով մը կ'սկսի շահալրողութիւն միսիօնարական գործով, որուն սնտուկին մէջ 2 փէնիլի դրամ կը ձգէ. ասիկա իրին համար մեծ գումար էր: Օր մը կէսօրէ վերջ անոր մէկ բարեկամը փողոցի մէջ իրեն կը հանդիպի, սովորականէն տարբեր ըլլալով ձեռքերը և երեսը մաքրուած և կոկիկ կիրպով հագուած վիճակին մէջ, և կը հարցնէ անոր թէ ո'ւր կ'երթայ: «Միսիօնարական հաւաքոյթի մը կ'երթամ», կը պատասխանէ տղան: «Բայց դուն ի՞նչ գործ ունիս հոն», կը հարցնէ նորէն բարեկամը: «Այս ձեռնարկին ես կերպով մը մասնակից եղած եմ, ուստի կ'երթամ հասկնալու թէ գործերը ի՞նչ կերպարանք են առեր», կը պատասխանէ ծխնելոյծ մաքրող տղան:

17 ՄԱՐՏ 1928—14 ՓԵՏՐՈՒԱՐ 1930

ՀԱԼԵՊԻ ԿՈՏՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԱՊԱԳԱՅ ԾԵՆՔԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՒԻՐԱՏՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ



ՍՈՒՐԻԱԿԱՆ ԴՐԱՄ ՏՈՒՈՂՆԵՐ		Տքթ. Չըպլագեան	Պէյրութ
Երկու (2) Ղրչ. Սուր. տուղներ		Արշակ Սընդճեան	»
Յարութիւն Օրինակեան Պէյրութ		Յարութիւն Նէնէճեան	Ձահլէ
Տասը (10) Ղրչ. տուղներ		Սամուէլ Գրըգեաշարեան	Պէյրութ
Յակոբ Ճուլփաեան Դամասկոս		Միսակ Տէր Պօղոսեան	»
Քսան և Կիւզ (25) Ղրչ. տուղներ		Մաքրուհի Չօպանեան	»
Բարսեղ Պօյաճեան Դամասկոս		Տքթ. Բիւզանդ Հատիտեան	»
Մարիճա Գունտուրաճեան Պէյրութ		Ստեփան Պատէմեան	Ճունի
Չ. Բուպեան »		Եփրեմ Թօփալեան	»
Միքայէլ Դաւիթեան Ճունի		Հայկազուն Ղազէրեան	»
Յիսուն (50) Ղրչ. տուղներ		Առաքէլ Փափազեան	Ֆրանսա
Տքթ. Ա. Տ. Մումճեան Դամասկոս		Հարիւր յիսուն (150) Ղրչ. տուղներ	
Օր. Տուաու Տանիէլեան Պէյրութ		Լուսանկարիչ Կիւլպէնք	Հալէպ
» Ե. Էլմաճեան »		Յակոբ Սալիպեան	Ձահլէ
Փերուզ Գանձապետեան »		Վեր. Յ. Շնորհօքեան	»
Պօղոս Ներսէսեան »		Երկու հարիւր (200) Ղրչ. տուղներ	
Ստեփան Պաղտատարեան »		Գրիգոր Կիրակոսեան	Պէյրութ
Վիգթօրիա Պարտազճեան »		Ճօրճ Կայծակեան	»
Կարապետ Լուսարարեան »		Պետրոս Քարծայր	»
Արշակ Սաչիկեան Ճունի		Առաքէլ Չանազանեան	»
Հարիւր (100) Ղրուչ տուղներ		Տքթ. Փանոս Մէրճանեան	»
Յակոբ Իւվէզեան Պէյրութ		Յարութիւն Մանուկեան	Ճունի
Մատամ Գ. Հէմպէքիտէս »		Յրթ. Միքայոնեան Պուէնոս Այրէս	
* Ստացադրի Թիւ 8 »		Բէնեամին Մանուկեան	»
		Եռսիֆ Էֆ. Պարտումեանի ձեռամբ	Լիօն
		(250) Ղրուչ տուղներ	
		Արթուհի Այնաճեան	Փարիզ
		Տէր և Տիկ. Մարտիրոսեան	Լիօն

* Անոնք որ իրենց անունը դադանի պահել կ'ուզեն, անոնց ստացադրին թիւը միայն կը տրուի:

(275) Ղրուշ տուողներ		Զարուհի Մենէնտեան	Հալէպ
Տիկին Պիւլպիւրեան	Պէյրուք	Նուարդ Գրիգորեան	»
		Խաթուն Մամբէրեան	»
(300) Ղրուշ տուողներ		Սարգիս Սիւրհեան	Դամասկոս
Տիգրան Կիւլէսէրեան	Պէյրուք	Տուտու Արօեան	Հալէպ
Տքթ . Կարապետ Մէրճանեան	»	Գօլինէ Հրապեան	»
Վեր . Ենովք Հատիտեան	»	Կասիա Փօլատեան	»
Ճուռէի Եկեղեցին	Ճուռէ	Եէնի Գօմշուեաններ	»
		Ուսաննա Սէրայտարեան	»
(400) Ղրուշ տուողներ		Հաճի Խօրօղեան	Դամասկոս
Տքթ . Վարդապետեան	Պէյրուք	Մանուկ Քէտէրեան	»
		Եղսա Պալեան	»
(500) Ղրուշ տուողներ		Եղիտարէթ Թուղլաճեան	»
Տքթ . Պէտիր	Պէյրուք	Զարեհ Գոշլումճեան	»
Օր . Եւնիկէ Զօլապեան	Մամլըլէյն	Մարի Ճիկէրեան	»
Արթին Սիրապիօնեան	Պ . Այրէս	Աննա Պչազճեան	Հալէպ
Հազար (1000) Ղրուշ տուողներ		Ուսաննա Քիւփէլեանի ձեռամբ	
Քէմփի Զանաթրացը	Պէյրուք	տիկին մը	Քէսապ
Միս Տէյվիսի Որրանոցը	»	Մարիամ Տէր Սարգիսեան Սօփուզ Օլ .	
		Եղսա Խանճրեան	»
(1115) Ղրուշ տուողներ		Անուշ Կիւզէլեան	»
Տքթ . Մինաս Մանուկեան	Պէյրուք	Մարիամ Արմատունի	»
		Իվօն Մովսէսեան	»
(2762 .5) Ղրուշ տուողներ		Սիրանուշ Մախեան	»
Սան Փազլօի Եկեղեցին		Նոյեմզար Եափըճեան	»
		Արօւսեակ Յարութիւնեան	»
(3177 .5) Ղրուշ տուողներ		Լուսարեր Քէլէճեան	»
Հայ Աւետ . Եղբայրութիւն Պ . Այրէս		Գառլինա Վատիաքապըլ	»
ԱՐԾԱԹ ԴՐԱՄ ՏՈՒՈՂՆԵՐ		Մատամ Ալիյէ	»
Երկու (2) Ղրուշ տուողներ		Մարիամ Գափտըրեան	»
Հայկուհի Հապիպեան	Հալէպ	Իսկուհի Սատըղեան	»
Նուրիճա Աւետիկեան Սօփուզ-Օլուզ		Աննա Կէօզէլեան	»
Մատամ Զուֆի	»	Մատամ Իրիսկին	»
		Սամուէլ Ուզունեան	»
Զորս (4) Ղրուշ տուողներ		Վեց (6) Ղրուշ տուողներ	
Զապէլ Պասմաճեան	Դամասկոս	Յակոբ Կէօնճիւրեան	Դամասկոս
Դիւմանտ Մինասեան Սօփուզ-Օլուզ		Պաղտատար Ղազարեան	»
Հինգ (5) Ղրուշ տուողներ		Մարիամ Ֆէրմանեան	»
Կարապետ Աշճեան	Հալէպ	Նազլը Գայանեան	Սօփուզ-Օլուզ

Եօթը (7) Ղրուշ տուղներ
Թագունի Պօստուրումեան Սօվուգ-Օլուգ

Ութը (8) Ղրուշ տուղներ
Մանուէլ Պօղ Օղլանեան Հալէպ
Մատամ Տէսպինա Սօվուգ-Օլուգ

Ինը (9) Ղրուշ տուղներ
Յովհաննէս Գուլումեան Դամասկոս

Տասը (10) Ղրուշ տուղներ
Երսա Մարանկօղեան Հալէպ
Յովսէփ Շաչօեան »
Աւետիս Գրիգորեան »
Մարի Պէգգեան »
Կիւրճիւ Էլմաճեան »
Սամուէլ Սլպարեան Դամասկոս
Հանէ Խիւտէյտա »
Եսթեր Մնչերեան Հալէպ
Եսայի Սաթթեան Դամասկոս
Համբարձում Սաթթեան »
Վահան Սէֆէրեան »
Պօղոս Մաքինաճեան »

Էրպու Մարտօեան »
Սարգիս Գուլումեան »
Նուարդ Պօյաճեան »
Յովսէփ Սամուէլեան »
Բահէլ Քիւրքեան Հալէպ
Ովսաննա Գասրճըեան »
Միւնիրա Ֆէրիտ Սօվուգ-Օլուգ
Վարդուհի Մահշիկեան »
Նուարդ Թապաղաղեան »
Եղիարէթ Պալեան »
Եղիսաբէթ Քիւփէլեան »
Մաքրուհի Եագուպեան »
Զարմայր Մինասեան »
Յակոբ Քէչիչեան »
Մարի Պարտումեան »
Աննա Պալլոգեան »
Նուարդ Սարաֆեան »
Յակոբ Սարաֆեան »

Մարի Վրդանէսեան Սօվուգ-Օլուգ
Արուսեակ Խաչատուրեան »
Մատամ Սապպաղ »

» Էտլի Անթունեատիս »
» Ավարաճի »
» Ատէլ Խուրի »
» Փաշա »

Տիկին Ելլիտ Սէմ »
Ովսաննա Մանուկեան »
Հոփսիմէ Տիւմանեան »
Երջանիկ Երամագեան »
Արուսեակ Աւետիկեան »

Տասնհինգ (15) Ղրուշ տուղներ
Սեդրակ Յովսէփեան Հալէպ
Մէննուշ Պէքեարեան Դամասկոս
Զապէլ Տէմիրճիեան Հալէպ
Բահէլ Տէյիւմէնճեան Հալէպ
Տուտու Տիմիճեան Սօվուգ-Օլուգ
Տիկնայք Մարաշլեան »
Մատամ Եաղըճը »
Մատամ Իմուրի »

Քսան (20) Ղրուշ տուղներ
Խաթուն Գարամանուկեան Հալէպ
Լուսիա Նահապետեան »
Յակոբ Կիւլպէնք »
Լեւոն Քիւրքեան »
Մարիցա Թէվէքէլեան »
Մայրապետեան »
Սիրանուշ Պալապանեան »
Օլիա Խանգէտեան »
Եսթեր Էլմաճեան »
Սէյտի Խաչատուրեան »
Կիւրճիւ Դըսաճըգեան »
Մէրին Փանճարեան »
Տիգրանուհի Պագգալեան »
Թօտօր Անթաքի »
Ովսաննա Գարամանուկեան »
Յակոբ Կիւլէսէրեան »

Զեփիւռ Նալպանտեան	Հալէպ	Սիւմա Սէրալլեան	Հալէպ
Նոյեմի Ապօնէ-Նազարեան	»	Արուսեակ Մակաղեան Սօվուզ-Օրուզ	
Քէմբի միքանի Վարժուհիներ	»	Մարի Տէր Մարտիրոսեան	»
Թորոս Գասպարճըզեան Դամասկոս		Տքթ. Հրեշտակեան	»
Սարգիս Գարլուղեան	»	Մարի Մինասեան	»
Աբօշ Աբօշեան	»	Վահիտէ Աւետիկեան	»
Մարտիրոս Ղուկասեան	»	Յակոբ Արմատունի	»
Սարգիս Սիմիթեան	»	Գէորդ Մանուչակեան	»
Առաքէլ Պէհաալըբեան	»	Լուսածին Արէլեան	»
Հաճի Յրթ. Քէօշկէրեան Պէյրութ		Լուսիա Գօջինեան	»
Տէր և Տիկ. Սէմէրճիպաշեան Հալէպ		Վերժին Քէքլիքեան	»
Զուարթ Մուրատեան	»	Մարիճա Սօղանալեան	»
Մարիամ Նուրիսանեան	»	Վերդինէ Մամալեան	»
Մաքրուհի Պապիկեան	»	Եէթի Տափուտ	»
Սիրուն Մարտիրոսեան	»	Մատամ ձէմիլէ ձիւրկափօ	»
Սիրանուշ Օհանեան	»	Բօզա Աճէմեան	»
Սուսաննա Փօլատեան	»	Մանուկ Պալիկեան	Հալէպ
Զեփիւռ Մնչկերեան	»	Փրափին Տիւմանեան Սօվուզ-Օրուզ	
Յակոբ Երբեմեան	Դամասկոս	Մարիամ Ալվաղեան	» »
Նիկողոս Հայթեան	»	Նեկաար Նազարեան	» »
Յարութիւն Պետրոսեան	»	Մատամ ձէնիշի	» »
Յարութիւն Թամամեան	»	Մէրում Էքմէքճեան	Հալէպ
Սարգիս Կիւրիւնեան	»	Ստադազրի Թիւ 343	»
Լեւոն Կիւրիւնիւրեան	»	Ստադազրի Թիւ 378	»
Մարիամ Ժամկոչեան	»		
Միհրան Սահակեան	»	Երեսուն (30) Ղրուշ տուղներ	
Գարեգին Սահակեան	»	Սիւմա Հանրմ	Հալէպ
Սամուէլ Պչապճեան	Հալէպ	Սալիպա Խիւտէյտա Դամասկոս	
Արշալոյս Աղէրեան	»	Ովոաննա Ալմօեան	Հալէպ
Հայկանուշ Աղէրեան	«	Մատամ Ֆիլիպպի Սօվուզ-Օրուզ	
Ներսէս Մաթթոսեան	»	Մատամ Էմին Ֆէլլահ	» »
Սրբուհի Եսայեան	»	Երեսուներկու (32) Ղրուշ տուղներ	
Էլիզա Քեահքէճիեան	»	Կիւլէնեա Քիւրքլիւեան	Հալէպ
Անիճա ձէպէճեան	»		
Աննա Գուլաճեան	»	Քառասուն (40) Ղրուշ տուղներ	
Մէրիյէ Նազարեան	»	Վեր. Ենոպք Կէօքկէօղեան Պէյրութ	
Կատար Սէֆէրեան	»	Սարգիս Լալէեան	Հալէպ
Նուրիցա Պաղսրպաշեան	»	Կարապետ Անտոնեան	»
Մէննուշ Իշխանեան	»	Ովոաննա Արսլանեան	»
Սիրանուշ Թիւթիւնճեան	»	Լուսին Էյլաղեան	»

Մէննուշ Սահակեան	Հալէպ	Յիսուն (50) Ղրուշ տուղներ	
Եսթէր Տէօքմէճեան	»	Տքթ. Գ. Սարգիսեան	Հալէպ
Հաճի Խանըմ Քիւրքճեան	»	Ստեփան Պարտազճեան Դամասկոս	
Լիա Խոյեան	»		
Համբարձում Պէրպէրեան	»	Յիսուն երկու (52) Ղրուշ տուղներ	
Արուսեակ Շիրաճեան	»	Եւնիկէ Ուզունեան	Հալէպ
Յովհաննէս Պահարեան	»		
Տէր և Տիկ. Վեր. Քէթէնճեան	»	Վաթսուն (60) Ղրուշ տուղներ	
Կիւլէնեա Սանոսեան	»	Կարապետ Արէլեան	Քէօքքիւնէ
Սէրուն Բուպեան	»	Մայրենի Էրքիլիթլիեան	Հալէպ
Եղսա Նուրէնեան	»	Եուսիֆ Տայեան	»
Գալէմքեարեան Եղբարք	»	Միսաք Մաթօսեան	»
Մէննուշ Նիկողոսեան	»	Պաղտատար Աճէմեան	Դամասկոս
Հաճի Խանըմ Պօյաճեան	»	Ալպէր Թաշօ Սէթեան	Հալէպ
Նէճրպ Շիրիքճիեան	»	Էմման Քէօմիւրճեան	»
Տքթ. Գ. Արլսնեան	»	Ովսաննա Պալեան Սօղուզ-Օլուզ	
Մովսէս Հասրըճեան	»	Սէմակիւլ Թումաեան	»
Զարուհի Ճէմէլեան	»	Էֆրօնիա Նազարեան	»
Տիգրան Պէօքքիլեան	Դամասկոս	Մատամ Եէնիշի	»
Կարապետ Գալաֆեան	»	Յակոբ Քէսթէքեան	Գահիրէ
Տեր և Տիկին Աբօշեան	Հալէպ	Ստացադրի Թիւ 387	Ատանա
Լուսանկարիչ Պրն. Յակոբ	»		
Տեր և Տիկին Սէրօքեան	»	Եօթանասուն (70) Ղրուշ տուղներ	
Միհրանուշ Մկրտիչեան	»	Վարդուհի Լօշխաճեան	Հալէպ
Պէաթրիս Գարամանուկեան	»	Գէորգ Լօշխաճեան	»
Ստացադրի Թիւ 163	»		
Տիկ. Ովսաննա Տայրեան	Կ. Պոլիս	Ութսուն (80) Ղրուշ տուղներ	
Ստացադրի Թիւ 169	Հալէպ	Արմաւենի Էրքիլիթլիեան	Հալէպ
Երուանդ Էքմէքճեան	»	Տէր և Տիկին Եուսիֆ Այնիլեան	»
Արմենակ Պէհաօրքեան	»	Զարուհի Կիւլէսէրեան	»
Ստացադրի Թիւ 177	»	Կէօյ Օղլանեան Էղբարք	»
Ազնիւ Եագուպեան	»	Տքթ. Ստեփան Բուպեան	»
Յովհաննէս Փալանճեան	»	Աւետիս Տէմիրճիեան	»
Յով. Յովհաննէսեան	Գըրըզ-Խան	Երանուհի Լեւոնեան	»
Տիկնայք Սինանեան Սօլուզ Օլուզ	»	Տքթ. Յ. Գալֆաեան	»
Լուսիա Քէշիշեան	»		
Միսիս Ուաթ	»	Հարիւր (100) Ղրուշ տուղներ	
Միսիս Քէնէտի	»	Տքթ. Մկրտիչեան	Հալէպ
Շուշան Գալաեան	Հալէպ	Քիլիսի Հայրենակցական Միութիւն	
Ֆէրիտէ Խաչատուրեան	»	Տքթ. Ե. Փօլատեան	Դամասկոս

Մինաս Պօղոսյան
Գէորգ Չաղըճեան

Հալէպ
Գահիրէ

Հարիւր տասը (110) Ղրշ. տուողներ

Արաքսի փօլատեան
Թամամ Փաթիաթեան

Հալէպ
»

Երկու հարիւր (200) Ղրշ. տուողներ

Մաքսուհի Իշխանեան

Գահիրէ

Երկու հարիւր տասը (210)

Ղրուշ տուողներ

Յովսէփ Ժամկոչեան

Դամասկոս

Երկու հարիւր քսան (220)

Ղրուշ տուողներ

Մէնուշ Խարաճեան

Հալէպ

Քէսապէն բարեկամներ

Քէսապ

Երկու հարիւր քառասուն հինգ

(245) Ղրուշ տուողներ

Հայ Աւետ. Եկեղեցի

Գըրըզ-Խան

Երկու հարիւր վաթսուսն հինգ

(265) Ղրուշ տուողներ

Մերսեան Յարութեան.

Լօս Անճէ.

Երկու հարիւր ութսուն

(280) Ղրուշ տուողներ

Հայ Աւետ. Եկեղեցի

Հօմս

Երեք հարիւր եօթանասուն

(370) Ղրուշ տուողներ

Պիթիասէն բարեկամներ

Պիթիաս

Երեք հարիւր ինիսուն ինը

(399) Ղրուշ տուողներ

Պապի Թաղական Խորհուրդ

Պապ

Չորս հարիւր քառասուն

(440) Ղրուշ տուողներ

Գըրըզ Խանէն մի քանի քոյրեր

Չորս հարիւր յիսուն երկու
(452) Ղրուշ տուողներ

Ռուսմասիրաց

Հալէպ

Չորս հարիւր ութսուն

(480) Ղրուշ տուողներ

Ստացադրի Թիւ 217

Հալէպ

Հազար հարիւր քսան

(1120) Ղրուշ տուողներ

Ստացադրի Թիւ 234

Գըրըզ-Խան

ՏԱԼԷՐ ՏՈՒՈՂՆԵՐ

Մէկ (1) Տալէր տուողներ

Երկու բարեկամներ

Լօս Անճէլօս

Հաճի Ովսաննա Քէօշկէրեան

»

Լեւոն Լեւոնեան

Հալէպ

Երկու (2) Տալէր տուողներ

Վեր. Կ. Սթանպօլեան.

Աթէնք

Քէրովքէ Միսիրեան

Գահիրէ

Էլիզա Թիւֆէնքճեան

Պրազիլիա

Գէորգ Գէյլէրեան

Աղեքսանդրիա

Չորս (4) Տալէր տուողներ

Սիրուն Թօփալեան

Ամերիկա

Հինգ (5) Տալէր տուողներ

Կիրակոս Պահարեան

Ամերիկա

Տիկին մը

Նիւ Պրիթէյն

Կարապետ Քէշիշեան

Նիւ Եօրք

Վարդան Պիլէզիքճեան

Ամերիկա

«Բահնիւմ» Վեր. Գրիգորեան »

Վեց (6) Տալէր տուողներ

Անիճա Թէրզիեան

Պրազիլիա

Ութը (8) Տալէր տուողներ

Ճիլմէճեան, Իսկեան, Մուրատեան և

Պէյրիքեան

Ամերիկա

Երեքուկէս (3.5) Սթէյրլին տուողներ

Miss M. J. Lovell Երուսաղէմ

Տասը (10) Տալէր տուողներ

Թագուհի Սիւլահեան

Ամերիկա

Հինգ (5) Սթէյրլին տուողներ

Տուտու Քէշիշեան

»

Հայ Աւետ . Եկեղեցի Գահիրէ

Մասիս Եկեղեցւոյ Տիկնայք Լ . Անճ .

«Բահնիւմա» Վեր . Գրիգորեանէ

Եօթը (7) Սթէյրլին տուողներ

Հայ Աւետ . Եկեղեցի Աղեքսանդրիա

Տասնհինգ (15) Տալէր տուողներ

ՕՍՄ . ՀնՁՈՒՆ ՈՍԿԻ ՏՈՒՈՂՆԵՐ

Տէր և Տիկին Յ . Պէպոնեան

[Լօս Անճէլօս

Մէկ (1) Ոսկի տուողներ

Ստացադրի Թիւ 235 Օքլէնտ , Գալ .

Նուրիճա Եիւզիւքճեան Պէյրութ

Գրիգոր Աղիրեան Հալէպ

Քսան (20) Տալէր տուողներ

Ստացադրի Թիւ 181 »

Վեր . Բիւզանդ Լիւսնեանի

Գօֆին Արսլանեան »

Եկեղեցին

Յիւլաւէլֆիա

Միքայէլ Ճապրա Սօփուզ-Օլուզ

Համեստուհի Կէօքճիւեան Գր . Սան

Ստացադրի Թիւ 372 Հալէպ

Քսանհինգ (25) Տալէր տուողներ

Սեդրակ Մանուկեան Պուէնոս Այրէս

Friends of Armenia of Pasadena

Քրիսթինա Կէրթմէնեան Ամերիկա

Քսան ութը (28) Տալէր տուողներ

Մէկ ու կէս (1.5) Ոսկի տուողներ

«Բահնիւմա» Վեր . Գրիգորեանի

Յակոբ Մուրատեան Հալէպ

ձեռամբ

Ամերիկա

Պետրոս Զօլագեան 1 լիր . 6 մէճիա

[Սուտան

Հարիւր (100) Տալէր տուողներ

Երկու (2) Ոսկի տուողներ

Աթլանթա Աւետ . Եկեղեցի

Կարուճ Վարպետեան Զահլէ

Յակոբ Արըզեան Թէհրան

Մանսուր Էֆ . Էսվէթ 5 ոսկի Հալէպ

Սթէյրլին ՏՈՒՈՂՆԵՐ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՍԿԻ ՏՈՒՈՂՆԵՐ

Մէկ (1) Սթէյրլին տուողներ

Երուանդ Կէյիքեան

Մուսուլ

Լարնազա Աւետ . Եկեղեցի Կիպրոս

Կէս (.5) Եգիպտ . տուողներ

Արէլ Տօնպուրեան

»

Եանգօ Այան օղլու և խաչէր Էֆ .

Նազէրին Եկեղեցի 1.650 Սթէյրլին

Սարեան

Գահիրէ

[Երուսաղէմ

Երկու (2) Եգիպտական տուողներ

Երկու (2) Սթէյրլին տուողներ

Կարապետ և Պետրոս Զօլագեան

Լիֆպօչիա Աւետ . Եկեղեցի Կիպրոս

[Սուտան

ՇԻԼԻՆ ՏՈՒՈՂՆԵՐ

Մէկ (1) Շիլին տուողներ

Վիգթօրիա Պետրոսեան	Կիպրոս
Սամուէլ Յարութիւնեան	»
Յովհաննէս Վախկալի	»
Կիրակոս Սիւրեան	»
Տիօնա Պէրպէրեան	Կիպրոս
Սիրուն Վահանեան	»
Քոյր մը	»
Քոյր մը	»

Երկու (2) Շիլին տուողներ

Յովհաննէս Մաթոսեան	Կիպրոս
Սարգիս Երկաթեան	»

Երեք (3) Շիլին տուողներ

Նազէլի Գալուստեան	Կիպրոս
-------------------	--------

Չորս (4) Շիլին տուողներ

Աննա Այճեան	Կիպրոս
-------------	--------

Հինգ (5) Շիլին տուողներ

Մանուէլ Քառուհի	Կիպրոս
Թադուհի Նաճարեան	»

41/2 Կիպրոսի Ղրուշ տուողներ

Նուարգ Ենովքեան	Կիպրոս
Մի ոմն	»
51 Թրքական թղթադրամ տուողներ	
Էմմանուէլ Եկեղեցին	Կ. Պօլիս
Ֆարթըսըր գիւղը 9.5 օգգա պուլ-	
ղուր, ցորեն, 28 օգգա սոխ, 20	
օգգա թուղ 16 օգգա պաստիկ, 1	
մուշկական ոսկի, գումար 310 Ղրշ.	
ողջ:	

Կը յաւինք եթէ կան անանկ
գումարներ որ թէպէտ զրկուեցան
բայց մեզի հասան: Եթէ ուէ սը-
խալմունք պատահած է ամենայն
սիրով շտկելու պատրաստ ենք:

Ի դիմաց կոյրերու մեր խորին
շնորհակալութիւնը յայտնելով,

Մնամք յարգանքօք

Ս. Ս. Մանուկեան

ԷՏՐԷՍ—

Rev. Sisag S. Manougian
Protestant Church,
Alepps, Syria

ՕՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Ահա ամէն բան նոր կը շինեմ»

Այս աշխարհիս եւ ժամանակիս մէջ մեր անյուշած կեանքը տեւականօրէն կը մաշի եւ վերջապէս մահուան մէջ կը վերջանայ:

Սոսակցութեան մը պահուն ճարտար վերարոյժ մէկ բարեկամս ինծի սապէս ըսաւ. «Մենք չենք կրնար նոր շինել, այլ միայն կը նորոգենք եւ կը կարկուտենք»:

Այսու հանգերձ քանիներ կան, որոնք այսպիսի կարկտողի նորոգութեան կարօտը կը քաշեն բայց չեն կրնար յաջողիլ: Ուրեմն վերոյիշեալ աւետիսը, որ առանց դրամի եւ առանց փոխարինութեան մեղի նորութիւն կը խոստանայ, ի՞նչ մեծ եւ ի՞նչ քաղցր պատգամ մը պէտք է ըլլայ մեզի համար:

Անցեալ տարի մեր սիրելիներէն քանիները իրենց մաշած սիրտերուն, թոքերուն եւ երիկամունքին նորոգութեան համար առանց դարման մը կարենալ գտնելու վերջապէս հողի յանձնուած են. անոնք հոն են այս կեանքին չվերադառնալու պայմանով: Ո՞վ գիտէ ներկայիս նոյն վիճակի մէջ տառապող քանիներ կան, որոնք ալ այս տարի նոյն բազդի պիտի վիճակուին:

Եթէ պատգամաբեր մը այս վերջիններուն աւետէ՛ ըսելով. «Ահա ես ամէն բան նոր կը շինեմ», ո՛րչափ ուրախութեամբ անոնք պիտի արտորան անոր դիմելու:

Կա՞յ անհատ մը որուն աւելի ներքին եւ բարոյական գործարանները մաշած չլլան իր ապրած կեանքի պայմաններէն երբեք կողմանէ: Ահա այսպիսիներուն համար այս աւետիսը ի՞նչ փառասորօրհնութիւն մը եւ առիթ մը պէտք է նկատուի: «Նոր տարուան մէջ ես ամէն բան նոր կը շինեմ»: Ահա առիթ մը անոր որ կ'ուզէ նոր ըլլալ:

Կին մը, որ փոխանցիկ հիւանդութեանց հիւանդանոցին մէջ կեանքին վերջին ժամերը կ'ապրէր, սապէս կ'աղաակէր. «Իցիւ թէ այս հիւանդութեանէն ազատուելով տունս երթայի եւ երեք օր վիճուիմ իմ մեռնէի»: Այս կնոջ փափաքը չիրականացաւ. բայց ի՞նչ մեծ առիթ կայ անոնց համար որ իրենց բարոյական ախտերէն զղջացած եւ նոր ըլլալու փափաքող են: Տակաւին գուրը բաց է:

Ուրեմն մենք բոլորս ալ այս նոր տարուան առթիւ մեր հոգեշունչ Հայրապետին, Ներսէս Շնորհալիի հետ քաղցրաձայն երգինք:

Նորոգող հնութեանց

Նորոգեա՛ւ ե պիս

Նորոգ զարգարեա՛ւ:

Հագիպ

Կ. Մ. ՔէթէնձեԱն

«Իցիւ թէ ծիծեռնակի նման թևերուս նենայի, թռչելով կը հանգչէի: Դառի՞թ

«Ո՞վ Հայր, կ'աղաչեմ որ զանոնք աշխարհի մէջ թողուս»:

Հաւատացեալը կ'աղօթէ որ օր առաջ աշխարհէն փախչի, իսկ Յիսուս կ'աղօթէ որ ան աւելի երկար առնէ մընայ հոն:

Ինչո՞ւ հաւատացեալը փախչիլ կը փափաքի. քանզի աշխարհը զայն կ'ատէ. քանզի աշխարհի մէջ չարիք կայ. քանզի աշխարհը մեղի համար պանդըխտութեան երկիր է: Մենք համբերել չենք գիտեր—Յիսուս համբերեց մինչեւ վերջին ժամը:

Տէրը ինչո՞ւ կը փափաքի որ հոս մնանք:

1. Որպէսզի մեր սրբազործումը կատարեալ ըլլայ եւ մենք երկինք մտնելու արժանի ըլլանք:

2. Որպէսզի այս շնորհքի աշխարհին մէջ մնալով աւելի վայելենք զԱստուած եւ Անոր սէրը. կեանքը շնորհք մըն է. կեանքի ամէն մէկ պահը մեղի կը յիշեցնէ Աստուծոյ շնորհքը:

3. Որպէսզի զԱստուած փառաւորենք, Երկու կերպով կարելի է այս նախ վշտի մէջ համբերութեամբ և առապանքի մէջ փառք տալով, երկրորդ շատերը Քրիստոսի առաջնորդելով, այսինքն ծառայելով և վկայելով: Յիսուսի փափաքը այս է որ դուն աշխարհի աղն ու լոյսը ըլլաս:

4. Որպէսզի աւելի յոգնելով երկնային ուրախութիւնը աւելի վայելիս, չը յոգնածներուն համար հանգիստը նըշանակութիւն չունի:

Բարեկամներ, Յիսուսի մեր մասին 1929 ի համար աղաչանքը ընդունուեցաւ, փառք Ածառնոյ. բայց պահել մը խորհինք, իր նպատակը իրականացա՞ւ: **Զահլե** **ՅԱԿՈԲ ՇՆՈՐՀՕՔԵԱՆ**

Քրիստոնեայ աշխարհը արեւելքէն արեւմուտք կրկին համակուած է Սուրբ Ծննդեան տօնախմբութիւններով: Բայց ինչ է Ծնունդի իրական նշանակութիւնը:

1. Աստուծոյ կողմէն փրկութեան և շնորհքի նոր հրաւեր մըն է ան թըշուառ մարգկութեան: Անով Աստուծաւորն սէրը կը հետապնդէ և մեղքի մեթին խորութեան մէջ վերստին կը զբոսնէ անապաշխար հոգին ու կը հրաւիրէ զայն ձրի փրկութեան և յաւիտենական կեանքի: Մեղաւոր, մի մերժեղ գայն, այս պատահութիւնը կրնայ վերջինը ըլլայ քեզի համար:

2. Նոր պատահութիւն մըն է ան Մեծ Աւետիսին ուժը մեր սրտերուն մէջ նորոգելու, Շնորհքի Աղբիւրէն վերամպելու համար:

3. Նոր պատահութիւն մըն է ան Ծնունդի իմաստը նորոյ ո շաղկապութեամբ ուսումնասիրելու, «Մեծ և սքանչելի խորհուրդ»ին խորհրդը իջնելու և սքանչանալու համար:

4. Վերջապէս նոր պատահութիւն է ան Աստուածային սիրոյ աւետիսով և

մեր քրիստոնէական արտօնութիւնն ուղհրճուելու: Խրախճանք, արգուզարդ և շնորհաւորութիւն որչափ որ տղերս ունին այս զգացումին հետը այնչափ Ծնունդի կը պատկանին:

Պրքիաւ

ՏԻԳՐԱՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Մայր ժամանակի կոյս երկունքէն ծնող մէն մի նոր տարի քեզի համար արժէք մը չունի երբ չէ ծնած քու մէջ նոր կոյս, նոր սէր և նոր հաւատք:

Մի հրճուիր ամէն «նոր»ով, զի ամէն նոր բաւի չկրնար ըլլալ: Նոր տարին հինը նոր չընէր ոչ ալ չարը բարի, դժն ևս որ «նոր»ը բարի և կամ չար պիտի ընէս ինչպէս ըրիր հինը:

Ատէ չար «հին»ը և ապրէ բարի ճըշմարիտ ու գեղեցիկ «նոր»ը ու անաքուկդ է նոր տարին, հրճուէ անով: **Քհորթիւնե** **Ա. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ**

Տարի մը ևս բոլորեցինք և մտանք նոր Տարուայ, 1930 ի սեմէն ներս: Տարիին «նոր» ամականը կուտանք, մինչդեռ մարդը պէտք է նոր ըլլայ, նորոգուի, փոխուի և վերստին ծնանի: Ան կարօտ է հագուելու բարոյական ու հոգեւոր նոր ոյժեր, ստանալու նոր սիրտ և նոր հոգի, որուն համար Աստուծոյ զիմիւ անհրաժեշտ է. և արդէն Ան մեզ իրեն կը հըրաւիրէ Սիրով սրպէսզի «նոր»ը ապրինք:

Էֆիզ-Օլուզ

Յ. ԿԻՐԼԷՔԵԱՆ

Ո՞վ գթառատ, համբերող Հայր, շնորհէ որ, այս նոր Տարին, որ ինծի համար նոր չի կրնար ըլլալ առանց ևս նորեղութելու, իմ մէջն թող նոր արարչագործութիւն մը կատարէ: Ո՛հ ո՛րչափ կը կարօտիմ հոգեւոր նորոգութեան և աւելի նորոգութեան: Ո՞վ օրեկիրքի Արարիչը և նորոգիչը, Դուն՝ որ յաւիտենական նորութիւն ևս, նոր ըրէ նաեւ զիս, զօրացուր իմ մէջն ներքին մարդը որ նոր Երեսօղէմի մէջ նոր քա-

դաքացիին ըլլամ ե բոլոր ընտրեալներու
հետ փեղի մէկ նոր երգ երգեմ:
Իսկեկեանն Կ. ԳԸՐԳԵԱՇԱՐԵԱՆ

ԱՆԾԱՆՈԹ ԶԱՄԲԱՅ

«Բանգի ասիկ առաջ սա ճանքային անցած
հեք:» Յետու 3. 4:

Քանանու ճամբո՛րդ, մի՛ աճապարեք,
Ու՞ր կ'երթաս, անդգոյշ, աչքերըդ յառեր
Կէտի մը, գուցէ, ուր՝ չես հասնիր դուն,
Կա՛ց պահ մը, խորհէ մտքով մը արթուն:

Զի՛ այսօր, գիտես թէ Ամանոր է,
Վերէն շընորհուած աննըման օր է,
Շատեր չի հասած այս նոր կայարան
Կէս ճամբան յոգնած, ճարհատ մեռան:
Արդ փառք տուր Տէրոջ, նախ բոլոր սըր-

(տով,

Որ առաջնորդեց քեզի, անվերգով,
Յետոյ, լա՛ւ խորհէ, Նոր տարուան վրայ,
Գաղտնիք մ'է, որ կը մեզ ներկայանայ:

* * *

Պէտք է գարհա՛րիս մտթ ապագայէն,
Քանցի անցած չես դուն ադ ճամբայէն,
Ճամբայ մը, գուցէ, փրչոտ, ծամածուռ
Վայրագ գողաններ, ժանիքներով սուր
Ուր կ'սպասեն քեզ, ո՛հ, դարանակալ,
Յօշոտելու՝ ցերդ ոտիս տխակալ:

Այո՛, կը գողայ խոր գետն Յորդանան,
— Խորհրդանշան անողք մահուան:

Անցած չես դուն այդ ամենի ձորէն,
Յո՛ւշ, անցո՛րդ, խորհէ քայլերդ լրջօրէն:
Մահուան ամպրոպաց մահուցու շանթեր,
Յարդ, անթիւ անգին կեանքեր են

քանդեր:

Կեանքեր, ո՛հ, ինկած գուբը կորստեան,
Լըխալն իւրեանց կ'ողբան, անդարձ,

յաւիտեան:

Ո՛չ, ոչ, կարող չես դուն քալել մինակ,
Անցո՛րդ, ճամբուն մէջ՝ անծանօթ,

դժնդակ:

* * *

Բայց, մի՛ վըհատիր, թշուառ հոգի, լա՛ւր

Պատգամ մը ունիմ այսօր քաղցրալուր
— Ճամբան բացուած է, մի՛ անգամ

ըզդիւշտ,

Թող վերնան միտքէդ վախ, թախիծ

ու վիշտ:

Բարձրեալ Տէրը, իր շնորհքով անհուն,
Ուզղիչ մը շնորհեց ապիկար մարդուն:

Տես՛, յառաջ կ'երթայ Նախակարապետ,

Հաւատքի՛ հրգօր, քաջ Սպարապետ:

Յիսուս է Անոր անունն աննըման,

Զօլուծիւն Նորա՝ անսպառ,

անսահման:

Ամէն բանի մէջ՝ Նա ամէն բան է:

«Անծանօթ ճամբան՝ Անոր ճամբան է:»

Զի իրն է անցեալն, ներկան, ապագան,

Եւ նոյնինքն է միւր անսխալ ճամբան:

Անոր հետ քալող ուղեորը հէք,

Զի գայթակղիր, ոչ՝ չի սահիր, երբէ՛ք:

Եւ Յորդանանու ջուրքն որոտածայն

Կը ցամքին իսկոյն, երբոր տեսնեն

զԱյն:

Հոգւոյն ստիկներն, ու փախչին անով,

Անցորդն կը քալէ հանդարտ, ապահով:

Կեանքի ձորերուն մէջ մութ, ամայի,

Զի վախտար ան՝ որ ՚ի Տէր կը նայի,

Խաւարի իշխանն երբ յանկարծակի

Դժխեմ գունդովը իր վրայ յարձակի:

* * *

Վեհ նըպատակով ստեղծուած, ո՛վ

մարդ,

Որքա՞ն ամօթ... որ քալես, ապրիս,

ա՛րդ,

Ծուռ ճամբուն մէջ, մոլոր, անառակ,

Հեռու Աստուծմէդ, մեղօք խայտառակ:

Հէք հոգի, յիշէ՛ Տէրըդ բարերար,

Քալէ Անոր մէջ, և, ա՛լ, մի՛ ըլլար

Ո՛հ, գերդ անասուն անմիտ և անբան,

Զի՛ կ'ըսէ քեզի Տէրն «Ես եմ ճամբան»:»

Վստահիլ Անոր՝ մի՛ գժկամակիր,

Որովհետեւ, Ատ ոյժովն համակ իր,

Կ'առաջնորդէ քեզ, անվախ անկասկած,

Յանկալի, պայծառ, երկիրըն փառաց:

Դանասիրտ

ՆԵՐՍԷՍ Ս. ՍԱՐԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՐՀԸ

Մեզի մարդերուս համար նիւթը եւ նիւթական յարաբերութիւնները աւելի իրական եւ աւելի կարեւոր, իսկ վերացական եւ անտեսանելի իրերը երեւակայան եւ անկարեւոր կը թուին, մեր մարմինը նիւթէ շինուած եւ մեր հինգ զգայարանքները ֆիզիկական յարաբերութիւններու համար պատրաստուած եւ հետեւաբար մենք՝ նիւթական աշխարհի հետ աւելի սերտ շփման մէջ գտնուած ըլլալնուս համար։ Այսու հանգիւրձ եթէ խնդիրը աւելի խոր կերպով քննելու ըլլանք պիտի տեսնենք թէ անտեսանելի իրերը տեսանելիներէն շատ աւելի յարկի, շատ աւելի իրական եւ կարեւոր են։

Նկատի առ մարդկային ձեռքերուն արտադրած բազմատեսակ թանկագին գործիքները, մեքենաներն ու առարկաները, որոնց արժէքը համեմատական է այն անտեսանելի բաներուն որոնք հոն զետեղուած են անտեսանելի մարդկային մտքէն. անոնց արժէքը կ'աւելնայ քանի այդ անտեսանելի բաները կ'աւելնան։ Զօր օրինակ, երկաթի հանքը իր բնական վիճակին մէջ հող մըն է որ արժէքով գրեթէ չի տարբերիր երկրիս ժայռի խաւերուն մէջ գտնուող ուրիշ հողերէն։ Առ այս հողը, աւելցուի անոր վրայ մարդկային մտքէն անտեսանելի բան մը, եւ ահա ան թանկագին նիւթի կը վերածուի, երկաթի կտորներու ձեւով. անոնց վրայ ուրիշ բան մ'ալ տեւցուի մտքէն եւ ահա անոնք պողպատի կը վերածուին եւ անոնց արժէքը աւելի կը բարձրանայ. պողպատին վրայ մտքէն բան մ'ալ դիր եւ ահա պողպատեայ շղթաներ յառաջ կուգան, անոնց վրայ անտեսանելի մարդկային մտքէն մի քանի յաւելումներ ալ ըրէ եւ ահա կը շինուի Պրուքլինի այգի նշանա-

ւոր եւ զարմանալի կախալ կամօրջը կամ էյֆէլի աշտարակը. եւ ահա այսպէս հող եզոյ երկաթին գինը միլիօններու կը բարձրանայ։

Մի քանի ամիսներ առաջ Ամերիկայի մէջ պատկերներու ցուցահանգէս մը սարքուեցաւ, որուն մէջ ներկայացուած Հայ նկարիչի մը մէկ նկարը հազար անգլիական ոսկիի ծախուեցաւ։ Ինչի՞ մէջ կը կայանար անոր արժէքը։ Նկարին նիւթը կտոր մը լաթէ եւ մի քանի զրուշնոց ներկէ կը բաղկանար. հոն՝ այդ տեսանելի տարածութեան վրայ նկարուեցան զաղափարներ, իմաստութիւն, ներդաշնակութիւն եւ գեղեցկութիւն, որոնք արուեստագէտին անտեսանելի մտքին ծնունդն էին. ահա այսպէս նկարին արժէքը կը գտնուէր ոչ թէ տեսանելի նիւթին՝ այլ անտեսանելիին մէջ։ Նայէ՛ այն կրանիթէ տձեւ կտորին, որ հազարաւոր տարիներէ ի վեր լիւին կողը թաղուած կը մնայ. թող Միքայէլ Անճէլոյի նման արձանագործի մուրճն աւելցուի գործին անոր վրայ, թո՛ղ այդ մեծ մտքէն վսեմ գաղափարներ կամաց կամաց քանդակուին հոն, եւ ահա այդ անարժէք քարը անգնահատելի, թանկագին եւ յարկի արձանի մը պիտի վերածուի։ Ի՞նչ է հոս պատահածը, — անարժէք նիւթին վրայ անտեսանելի բաներ աւելցուեցան եւ ան արժէք ստացաւ։ Մի քանի կրամ հող եւ ջուր առ, եւ եթէ կրնաս, անոնց մէջ դիր այն անտեսանելի տարրը որ կհանք կը կոչուի, եւ ահա կոկոնազարդ վարդենի մը յառաջ կուգայ։ Ի՞նչ պիտի զբաւենինք եթէ իբր նիւթ քննենք մարդը, որ արարածներու բարձրագոյնն է։ Անիկա ուրիշ բան չէ այլ միայն մէկ խառնուրդը կիրի, ծծումբի, բնածուխի, թթուածինի եւ ջրածինի. այս նիւթերուն վրայ անտեսանելի տարրերու — կեանք, միտք, հոգի — յաւելումով յառաջ կուգան մարդիկ, որոնց մէջէն երեւան կու-

զան Շէյքսպիրի, Ալիշանի, Էտիսընինը-
կան հանճարները: Ուրեմն, ակնյայտի
իրողութիւն մը չէ՞ որ իրական արժէքը
անտեսանելի բաներու մէջ կը գտնուի
ոչ թէ տեսանելիներու:

Ֆիզիքական տշխարհի մէջ տեսու-
թիւն մը կայ, որ ֆանգլորիշըն ալ
հերքնի [ոյժի պահպանում] կը կոչուի:
այսինքն աշխարհի մէջ գտնուած բոլոր
նիւթերէն հիւլէ մ'իսկ չի կորսուիր: Ինչ-
պէս նաեւ լոյսի, տաքութեան և շար-
ժումի եւ ելեքտրականութեան նման ոյ-
ժերէն մասնիկ մ'իսկ չի կորսուիր: Յիշ-
եալ այս չորս ոյժերը չկորսուելով հան-
դերձ տեսականօրէն իրարու կը փո-
խուին: Չոր օրինակ, վերջերս մեր
քաղաքին մէջ կը տեսնենք ելեկտրա-
կան ոյժը, որ մեր սենեակներուն մէջ
լոյսի, հանրակառքի մէջ շարժումի,
արդուկի մէջ տաքութեան կը փոխուի:
Մենք կը տեսնենք որ նիւթերը տեսա-
կան կերպով քիմիական և ֆիզիքական
փոփոխութիւններու կ'ենթարկուին: մէկ
կողմէն անոնք կը փափուին, իսկ միւս կող-
մէն նորերը կ'արտադրուին: Մենք ցաւ
կ'ըզգանք երբ կը տեսնենք որ փայտը
վառած ատեննին իբր թէ կը կորսուի:
մի' վախճար, անոր մէկ հիւլէն իսկ չկոր-
սուեցաւ. ան միայն կազի վերածուելով
օդի մէջ անյայտ եղաւ. կողովին մէջ
գտնուող ածուխին՝ և օդին մէջ անյայտ
եղող ածուխի հիւլէներուն թիւը ճիշդ
նոյնն է. ածուխին՝ օդի մէջ կամ կողո-
վին մէջ մնալը աշխարհի համար տարբե-
րութիւն չըներ, բայց մեզի համար կ'ը-
նէ: Ո՞վ գիտէ, այն ածուխը որ վառե-
լով մեզի համար անյայտօրացած է, ո՞ր
անտառին ծառերուն տերեւներուն կող-
մանէ ծծուելով նորէն ծառերու կոճղե-
րուն մէջ պիտի ամբարուին մեզի հա-
մար: Այսպէս յայտնի կը տեսնուի որ
վառող ածուխը չկորսուեցաւ այլ իր տե-
ղը եւ ձեւը փոխեց: Այս կերպով բնու-
թեան մէջ տեղի ունեցող հազար ու մէկ

փոփոխութիւններու միջոցին ո՛չ նիւթի
հիւլէներուն թիւը կը փոխուի և ո՛չ ալ՝
ոյժերու քանակը:

Ուստի, եթէ այս քիչ արժէքաւոր
նիւթական աշխարհի մէջ ոյժի պահպա-
նումը իրողութիւն մ'է, անկէ բազմա-
պատիկ աւելի արժէք ունեցող աշխար-
հին մէջ—հոգի, միտք, իմաստութիւն,
ճշմարտութիւն, արդարութիւն և նման
ոյժերը պարունակող հոգեւոր աշխարհի
մէջ—ոյժի պահպանումը գոյութիւն չու-
նի՞: Այո՛, հոգեւոր ոյժերու եւ գոյու-
թիւններու եւ ո՛չ մէկը չպիտի կորսուի:
Մինչ կը հաւատանք թէ գերեզմանի մէջ
դրած մեր սիրելիներուն ափ մը հողերն
իսկ չպիտի կորսուին, ուրանա՞նք մեր
հոգիներուն խօսող անոնց անուշ հոգի-
ները, ուրանա՞նք մեր սիրտերուն մէջ
անոնց թողուցած անշիջելի յաւիտենա-
կան սէրը, պարզապէս անոր համար որ
անոնք անտեսանելի են: Ո՛չ, անոնք ոչ
միայն նիւթի պէս այլ նիւթէն ալ աւել-
ի իրական գոյութիւն ունին: Այս
վարկենիս կուզենք հաստատօրէն շեշ-
տել Ս. Գրքի մէջ գրուած «երեւցած բա-
ները ժամանակաւոր են, բայց չերեւ-
ցածնիրը՝ յաւիտենական» խօսքը, որ
մեր բոլորին սրտին այնքան մօտ կու-
գայ: Ո՞վ գու՝ երիտասարդ բարեկամս,
որ չես հաւատար հոգեւոր ճշմարտու-
թեանց, անտեսանելի աշխարհին, և կամ
չատ թեթեւամտութեամբ կ'առնես զա-
նոնք, դուն հաւատաս կամ ոչ՝ անոնք
գոյութիւն ունին: Բայց քեզի համար
ամէնէն ապահով ճամբան անտեսանելի
իրերը տեսնելու համար հաւատք ունե-
նալ է. և մինչ դուն կը ճգնիս անտեսա-
նելիները տեսնելու, անպատճառ օր մը
անոնց մէջ պիտի տեսնես անտեսանելի-
ներու անտեսանելին, Աստուած Ինքը:

Օր մը յայտնի դէմք մը, որ իր բոլոր
կեանքին մէջ վաճառականութեամբ և
նիւթով զբաղած էր, առիթը ունեցաւ
նգիպատօսի ամէնէն մեծ բուրգը տեսնե-

լու: Հոն՝ բուրգին ստորոտը կայնած, չկարենալով ուրիշներուն նման հրաշալի և պատկառազգու բան մը տեսնել անոր մէջ, սապէս կը բացականչէ. «Միթէ սա քարերու կոյտն է այն զոր բուրգ կը կոչեն. տեսնելու արժանի ի՞նչ կայ անոր մէջ» Յաւալի է որ այդ մարդը թափանցող տեսողութենէ զուրկ էր տեսնելու համար այդ քարերէն անդին գրտնուող մարդկային անտեսանելի միտքը, այդ հրաշալի ճարտարագիտութիւնը եւ վերջապէս անմահութեան գաղափարը որուն վրայ հիմնուած է բուրգը: Արդարեւ ի՞նչ թշուառ են այն մարդիկ որոնք չեն կրնար անտեսանելի աշխարհը տեսնել և անկէ հաճոյք գրալ: Քարերն իսկ քեզի ուրախութիւն պիտի պատճառեն եթէ անտեսանելի աշխարհը տեսնելու մարդանքին մէջ գտնուիս:

(Շարունակելի)

Հալեայ

(Տօքթ.) Ա. ԺէՊէճեԱն

Ս. ԳՐԳԻ ՀԵՂԻՆԱԿԸ

(Շարունակութեան. 1929, թիւ 2466)

Բ. Ս. Գրգը չիտակ հասկնալու համար ստիպուած ենք խոստովանելու որ ՄԱՐԴԻՆ ԱՆ ԱՆՈՐ ՀԵՂԻՆԱԿԸ է: Մարդը զրկած կ'ըլլանք իրեն պարզեւուած մեծ շնորհէ մը, եթէ «տառական ներշնչում»ի վարդապետութեան շեղինք, չափազանցութեան երթալով Ս. Գրգի իբր հեղինակ զԱստուած փառաւորելու մէջ: Քանզի Ս. Գրգը պզտիկ ուշադրութեամբ կարդացողներն իսկ կը տեսնեն որ Աստուած խոնարհութիւն ցոյց տուած է Ս. Գրգի հեղինակութեան պատիւը մարդուն հետ բաժնելու: Որքան հաճութիւն ցոյց տուած է որ խաղողը ճիւղերու միջոցաւ արտադրէ ձիւղերը առանց Որթի չեն կրնար խաղող արտադրել, իսկ առանց ճիւղերու ալ կարելի չէ Որթէն խաղող քաղել: Եթէ այն Անձը, որ «Ես Որթն եմ և զուք ճիւղերն էք» ըսած է, զործի մէջ մարդերը իրեն աշխատակից ընտրած է. ասիկա այնպիսի երևոյթ մըն է զոր փոխանակ ուրանալու պէտք է գոհութեամբ ընդունիլ ու քարոզել: Աստուած կրնար խօսիլ ուղղակի կերպով կամ հրեշտակներու միջոցաւ. բայց յօժար գտնուած է խօսելու մարդարէներու միջոցաւ Հին Կտակարանի մէջ [Երբ. 1. 1] և Առաքեալներու միջոցաւ Նոր Կտակարանի մէջ [Բ. Կորն. 5. 20]: Եթէ Աստուած զանոնք տառ առ տառ խօսելով գրել տուած ըլլար, գրողներու տարբերութիւնը միայն իրենց ձեռագիրներուն մէջ պիտի տեսնուէր, մինչդեռ լեզուն և ոճը նոյնը պիտի մնային: Սակայն ի՞նչ մեծ տարբերութիւն կայ Եսայիի և Երեմիայի, Պօղոսի եւ Յակոբոսի ոճերուն միջև: Ուրեմն Եսայի կը ճառէ Աստուծոյ մէջ առածներուն մասին ոչ թէ Աստուծոյ այլ Եսայեան լեզուով: «Այս գանձը մենք հոգէ ամաններու մէջ ունինք»: Բ. Կորն. 4. 7:

Աստուած մարդերը կը հրաւիրէ վկայութեան (Ես. 43. 10, 12, Ղկ. 24. 48). եւ անոնք կ'ըսեն. «Կը վկայենք, որուն համար լսեցինք, որն որ մեր աչքերովը տեսանք, որուն նայեցանք, ու մեր ձեռքերը շօշափեցին»: (Ա. Յովհ. 1. 1-2, Գործք. 3. 15): Աստուած, որ դատախազի հանգամանքով կայնած է, կ'երեւի թէ վկայի կը կարօտի: Վկաները պէտք է հաստատեն թէ իրենք «յանցանքներու և մեղքերու մէջ մեռած էին և Աստուած զիրենք կենդանացուց» (Եփս. 2. 1.) մինչ Աստուած կը պնդէ որ Իրմէ «ուրիշ Փրկիչ չկայ» (Ես. 43. 11): Անհրաժեշտ է որ վկայ մը գտնուի ըսելու, «Ես կոյր էի հիմա կը տեսնեմ» (Գործք. 3. 15), մինչ Ան լուր կը զրկէ ըսելով որ «կոյրերը կը տեսնեն» (Մատթ. 11. 5): Անպատճառ մարդիկ պէտք է գտնուին ըսելու թէ «մենք վկայ ենք», (Գործք. 3. 13), մինչ կ'ըսուի որ «Աստուած զայն

յարոյց», (Գործք. 2. 24): Բայց վկաները իրենց տեսածներն ու գիտցածները փոխանակ իրենց իսկ լեզուովն ու ոճովը յայտնելու եթէ դատախազէն բառ առ բառ առնելով վկայեն, ո՞ր արդար առեանը զանոնք իբր վկայ կրնայ ընդունիլ: Ահա այսպէս միայն «վկայ» բառը կը բաւէ հերքելու «տառական ներշնչումի» վարդապետութիւնը:

Նոյն ինքն իրողութեան նայե. երբ Հին Կտակարանի առաջին հինգ գիրքերը կը կարդանք, յայտնի կը տեսնուի որ անոր հեղինակը մարդ է (կարգա՝ Բ. Օրինաց 31. 9): Յետու 24. 25-26ի մէջ կը յիշուի թէ ժողովուրդին համար օրէնք դրնող, դատաւոր կարգող եւ զայն գրքի մէջ արձանագորդը ինքն էր: Ծանօթ կէտ մըն է որ Դատաւորաց Գրքին հեղինակը ջանացիր է ժամանակագրական կարգի դնել իր քաղած տեղեկութիւնները: Թագաւորաց եւ Մնացորդաց գիրքուն ոճը, իրարմէ ունեցած մասնաւոր տարբերութիւնները, Հռութի, Եզրասի, Նէմիայի եւ Յոթերի տուած պատմական տեղեկութիւնները եւ Յորի պատուհասը ոչ միայն մեզ չեն կրնար համոզել «տառական ներշնչում»ի մասին այլ անոր պէտք ալ չեն ցոյցներ: Սաղմոսաց մէջ կը յիշուի թէ անոնց գրողներն են Դաւիթ, Ասափ, Կորիս եւ այլն: Իսկ մարգարէները՝ իրենց սեպհական ոճովը, այդ տառնուան մարդոց համար հասկնալի առակներովը, այդ ժամանակին լեզուովը եւ վարքին ու սովորութեանց համեմատ խօսած են այն չափով որ Աստուծմէ կըրցած են հասկնալ: Անոնք յաճախ այնպիսի բառեր եւ պատկերներ գործածած են (ընթերցողը թող հասկնայ), գորոնք գործածելու չեն կրնար զիջանիլ հիմարեմերը եւ ունկնդիրները չեն կրնար լսել առանց կարմրելու եւ բարկանալու: Ճշմարտութիւնները թէպէտ նոյնն են բայց անոնց կերպարանքը զանոնք խօսողին եւ լսողին համեմատ գոյն կ'առնէ, եւ

անոնք ժամանակի եւ տեղի նորոյթին կը հղատակին. այս պատճառաւ մենք այդ ոճէն այդ ժամանակի բարոյական անկումըն ալ կը տեսնենք:

Նոր Կտակարանի մէջ Պողոսի, Պետրոսի, Յակոբոսի եւ Յուդայի թուղթերուն մէջ կը յիշուի թէ անոնց հեղինակները իրենք են: Յովհաննէս ծերերու եւ երիտասարդներու գրած առեն կ'ըսէ «Ես կը գրեմ», «ես գրեցի» (2. 12-14, 3. Յով. 9): Իսկ Յայտնութիւնը գրող Յովհաննէսը մեծ դժուարութեամբ կը ջանայ նկարագրել իր գտնուած տեղը, իր լսած եւ տեսած բաները: Ղուկաս յայտնելով հանգերձ իր եւ իր միւս ընկերներուն տեղեկութեանց ազբիւրը՝ ըսելէ յետոյ թէ ուշադրութեամբ քննած եւ անոնց ճշմարտութեան համոզուած բաները գրի առած է, կը շարունակէ. «Յարմար դատեցի կարգաւ գրել» (Ղուկ. 1. 1-4, Գործք. 1. 2): Արդ՝ այսչափ վկաներ իբրեւ ամպ մեր շուրջը պատած ըլլալով ամէն հաւատացեալի պարտականութիւնն է թօթափել «տառական ներշնչումի» ծանրութիւնը:

Սակայն աւելին կայ. ա՛ռ չորս Աւետարաններու մէջ գրուած առակներն ու հրաշքները: Էութեան մէջ նմանութիւն բայց մանրամասնութեանց մէջ տարբերութիւններ պիտի տեսնես: Զորսն ալ Յիսուսի յարութիւնը կը պատմեն. բայց չես կրնար զանոնք կարգի դնել առանց մէկուն կամ միւսին պատմութեան շաղքը փոխելու: «Գործք Առաքելոց»ի մէջ Պողոսի դարձին պատմութիւնը երեք անգամ գրուած կը գտնենք. հեղինակը նոյնը ըլլալով հանգերձ անոնք իրարմէ դարձեալ կը տարբերին (Գործք. 9. 7, 22. 9): Յիսուսի խաչէն կախուած տախտակին վրայ գրուած մէկ նախադասութիւնը չորս Աւետարաններու չորս գրողներուն կողմանէ չորս տարբեր ձեւերով գրուած է: Մինչ Մատթէոս եւ Մարկոս «վեց օրեաքը» կ'ըսեն, Ղուկաս «մօտա-

ւորապէս ութը օր վերջը» կ'ըսէ (Մատթ. 17. 1, Մարկ. 9. 1, Ղուկ. 9. 28): Ղուկաս Յիսուսի ազգազրուծիւնը տալու տեան «մօտաւորապէս» եւ «կտրծուածին համեմատ» բառերը կը գործածէ (Ղուկ. 3. 23): Ղուկասի այս խօսքերը բոլորովին կը հերքեն «բառական ներշնչում»ի վարդապետութիւնը. քանզի Աստուած մարդ չէ որ «մօտաւորապէս» ըսէ, կամ կարծելով խօսի:

Յայտնութեան գիրքը մեծապէս օգտուած է Մովսէսի լերան վրայ տեսած տեսարանէն, Եսայիի, Եզեկիէլի, Դանիէլի մարգարէական բացատրութիւններէն: Այս գիրքը զանց առնելով՝ կը տեսնենք որ Նոր Կտակարանի մէջ 121 համարներ շին Կտակարանի դէպքերուն կամ համարներուն կ'ակնարկեն: Աստուծոյ վատ 276 համարներ նոյնութեամբ, և 101 համարներ քիչ մը տարբերութեամբ մէջբերումներ են, մինչդեռ տառական ներշնչումի վարդապետութիւնը տառական մէջբերումը անհրաժեշտ կ'ընէր: Եթէ ուղիղ կերպով պիտի ըսուի՝ պէտք է յայտնել թէ յիշեալ 161 համարները միմիայն յիշողութեան թերութիւններն են: Ուշագրաւ երեւոյթ մըն է որ չորս Աւետարաններու մէջ մէջբերուած 172 համարներէն 64ը, Պօղոսի գրութեանց մէջի 107 մէջբերումներէն 10 հատը, Եբրայեցւոյ թուղթին մէջի 34 մէջբերումներէն միայն երեքը նոյնութեամբ չեն կատարուած. իսկ այս յառաջ կուգայ հեղինակներուն զարգացման տարբերութիւններէն: Ս. Գրքի բնագիրները արդէն կորսուած են, և անոնց հնագոյն ընդօրինակութիւնները Դ. եւ Ե. դարու կը պատկանին: Հոս մասնագէտներուն կը թողունք թուել այն տարբերութիւնները որոնք ձեռագիրներուն՝ կարգ մը գիրերը, բառերը նոյնիսկ հատուածները գրելէն կամ զանց ընելէն կը ծագին:

Վերը իբր նմոյշ ներկայացուած կէ-

տերը՝ մինչ անկարող են Ս. Գրքին էական պատգամին մնասելու, կը բաւեն փաստելու թէ անոր մէջ մարդն ալ կարեւոր բաժին մը ունեցած է: Ուստի, ստիպուած ենք ըսելու թէ Ս. Գրքի համաձայն չէ ըսել թէ Աստուած գրած է զայն, կամ բառ առ բառ տուն տուած է. միայն թէ Աստուծոյ սուրբերը «Ս. Հոգիէն շարժուած խօսեցան» (Բ. Պետ. 1. 21) այնչափ որչափ որ Աստուծոյ կերպան հասկնալ:

Ամփոփ կերպով կ'ըսենք. ա) Աստուած կրցաւ խօսիլ այն բոլորը զոր կ'ուզէր խօսիլ. ոչ. Մարկ. 4. 33, Յով. 16. 12: բ) Աստուած կրցաւ հասկնել այն բոլորը զոր կ'ուզէր խօսիլ. ոչ. Մատթ. 16. 9 և 11, Եբր. 5. 11-14, Ա. Կորնթ. 3. 2, Սաղմ. 119. 18: գ) Մարդիկ կըրցաւ արտայայտել այն բոլորը զոր կըրցան հասկնալ. ոչ. Ա. Կորնթ. 13. 9, Բ. Կորնթ. 12. 4, Եբր. 5. 11. դ) Նոյնութեամբ մեր ձեռքը կը գտնուին ան բաները զոր անոնք կրցած են արտայայտել. ոչ. ըսուեցաւ թէ հնագոյն ընդօրինակութիւնները Դ. եւ Ե. դարու կը պատկանին: ե) Մեր ձեռքը գտնուած մասը հասկնալ զիրերն է. ոչ. (Բ. Պետ. 3. 16: զ) Մեր ձեռքը գտնուած մասը կը բաւէ մեր փրկութեան համար. այո՛. Բ. Տիմ. 3. 15: է) Աստուած վերջապէս պիտի յաջողի՞ իր այս նպատակին մէջ. այո՛. Ես. 11. 1:

Եզրակացնելով կ'ըսենք, թէ անսխալական Աստուածը յօժարած է իր անսխալ յայտնութիւնը բացատրել հասկնալու և արտայայտելու մէջ սխալական մտրդոյ միջոցաւ, սխալ հասկնալու հնթակայ մտրդերու, և թէ Ան յաջողած է իր այս նպատակին մէջ ու պիտի յաջողալ: Փառք Աստուծոյ իր այս մեծ շնորհքին համար:

[Շարունակելի]

Հաղպ

Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

«ԱՂԱԶԱՆԻ ՄԸ...»

(Եւրոպական տարի 1929, թիւ 2366 եւ վերջ)

Թողրէնս-Լայնսթրասթ

«Իցիւ թէ քիչ մը պահպանողական
ըլլալ յանձնարարէին»։ ասիկա շիտակ
է։ Ծայրագոյն արդիւնաւորութիւնն է
որ զէպի հերետիկոսութիւն կը յառաջա-
նայ, բուն իսկ յարձակումը ասոր զէմ
ուղղած է և պէտք է ուղղուի։ Ծայ-
րագոյն ու չափաւոր։

Միւս կողմէն ալ շատ լաւ կ'ըլլայ
«եթէ քիչ մը արդիական ըլլալ յանձնա-
րարուի պահպանողականներուն»։ Այն
ատեն երկուքն ալ իրենց պէտք եղած
գիրքին մէջ կը գտնուին, ինչ որ մենք
կը յանձնարարէինք «Բահնիւմ»-ի մէջ։
Ասիկա լայնատեսութիւն է, որ պէտք է
մէկ արդիւնքը ըլլայ քաղաքակրթու-
թեան և մանաւանդ քրիստոնէական
սիրոյ։ Ասիկայ լայնատեսութիւն է,
չափաւոր արդիւնաւորութիւն է, զոր
Գամաղիէ Սանհատրիոնի ժողովին մէջ
իր ներդրում [աւելի լաւ կ'ըլլայ եթէ ը-
սեմ ծայրագոյն պահպանողական] ըն-
կերներուն կը յանձնարարէր [Իործք
5. 34-40]։

Արդիւնաւորութիւնն ապատակը, ինչ-
պէս հիմնապաշտներունը, քանդել չէ,
այլ՝ շինել, գիտութեան գիւտերը եւ
կրօնքի ճշմարտութիւնները իրարու հետ
համաձայնեցնել է, ասկէ 1500 տարի ա-
ռաջուան աստուածաբաններու մեկնու-
թիւններուն տեղ, որոնք այսօր անմար-
սելի են և գիտական քննադատութեան
չեն կրնար գիմանալ, նոր մեկնութիւն-
ներ տալ է։

Ս. Գիրքը փոփոխութեան կամ բա-
րեփոխումի չ'ենթարկուիր։ Քաւիցի,

ոչ ոք կ'ուզէ այս։ «Ս. Գիրքը իր ամ-
բողջութեամբ կը պահուի»։ Ասկէ 1000,
1500, 1800 տարիներ առաջուան մեկ-
նիչներու եւ Հայրապետներու կարծիք-
ները, մեկնաբանութիւնները միայն կը
փոխուին կամ կը բարեփոխուին։ Ամէն
գար և ապագայ գարերը անցեալի սխալ-
ները պիտի սրբազրեն, ՊէՏՔԷ ՍՐԲԱԳՐԵՆ
ա՛յս է յառաջդիմութիւնը, ա՛յս է ար-
դիւնաւորութիւնը իր չափաւոր ձեւին
մէջ, որ կրօնքը կը համաձայնեցնէ ներ-
կայ գիտուններուն մտքին եւ պէտքե-
րուն, և որ կրօնքը աւելի սիրելի կ'ըն-
ծայէ։ Ս. ԳԻՐԲԸ ԶԻ ՓՈՆՈՒԻՐ, ԱՅԼ
ՄԱՐԴԵՐՈՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ ՈՐ
ԿԸ ԲԱՐԵՓՈՒՅԻՆ։

Արեւն ու երկիրը չփոխուեցան, այլ
կալիւէի նոր զաղափարով գիտութեան
հին սխալ ըմբռնումը շտկուեցաւ։ Նմա-
նապէս կրօնքը երբեք չի փոխուի, իր
տեղէն երբեք չի շարժիր, կրօնական
գաղափարներուն, մարդոց մեկնութիւն-
ներուն փոփոխութեամբ և նորանալո-
վը։ Ահա բոլոր վէճը ասկէ կը բաղկա-
նայ։ Գոյումպոս Աշխարհը չփոխեց, այլ
այդ մասին եղած սխալ ըմբռնումը ուղ-
ղեց։ Երբեք չվախճանք, բոլոր Ս. Գիր-
քը Աստուծոյ շունչն է, միակ միջոցն է
որ մարդը կ'առաջնորդէ Հօր Աստուծոյն։
Դարեր անոր վրայէն անցած են, բայց
անիկա անխախտ կը մնայ, անոր վարկը,
ոյժը և հետեւորդներուն թիւը աւելցած է։

Ասկէ 23 տարիներ առաջ, երբ Հարթ-
ֆըլթի Աստուածաբանական ճեմարանին
մէջ յետընթացաւարտի դասընթացքի մը
կը հետեւէի, ինծի շատ տարօրինակ թը-
ւեցաւ գտնել թէ՛ Ծննդոցի առաջին զը-
խին մասին երկու փրօֆէսորներու կար-
ծիքները իրարմէ մեծապէս կը տարբե-
րէին։ Ասիկա ինծի անհասկնալի թը-
ւեցաւ։ Օր մը նախագահին պարզեցի
գծաւարութիւնս եւ գանդափեցայ ըսե-
լով. «Փրօֆէսորներէն մէկը Ծննդոցի ա-

առջին գլուխները տառապէս կ'ընդունի եւ յիշուած օրերը 24 ժամէ բաղկացած կը նկատէ, իսկ ուրիշ մը իւրաքանչիւր օրը իբր միլիօնաւոր տարիներէ բաղկացած շրջան մը կը բացատրէ: Եթէ մէկը ճիշդ է միւսը անպատճառ սխալ է. երկուքն ալ նոյն դպրոցին մէջ կը դասախօսեն. ի՞նչ դարմանալի է այս:» Նախագահը պաղարիւնութեամբ եւ ժպտելով այսպէս պատասխանեց. «Մենք թէ՛ հին եւ թէ՛ նոր մեկնութիւնները կուտանք, դուք մարդ էք, եւ ընդունեցէք այն որ ձեր մտքին համաձայն կը դտնէք: Տարբեր մեկնութիւնները կրօնքին չեն վընասեր, դուք երկուքն ալ պէտք է սորվիք: Մեկնութիւնները մարդկային մտքի ծնունդն են, եւ փոփոխութեան ենթակայ:»

Անցեալ օր մը, յօդուածիս «Րահնիւմա»ի մէջ հրատարակումէն վերջ, ծայրագոյն պահպանողական մէկ բարեկամս ինծի անգլիերէն թերթ մը զրկած էր, որպէս զի զայն կարգալով միտքս ուղղեմ, մինչդեռ ճիշդ իմ տեսակէտս կը պաշտպանէր այդ յօդուածը, որուն խորագիրը «Արդիապաշտութեան սխալները» բառերը կը պարունակէր միայն: Բարեկամս իմ նոյնիմաստ խօսքերս սխալ կը գտնէր, և ուրիշինը՝ միայն խորագրէն տարուելով ինծի դէմ իբր գէնք գործածել կ'ուզէր: Շատերն ալ այսպէս են, առանց գիտնալու կը խօսին: Ահա թերթը. The Defender, Մարտ, 1929. յօդուածին նիւթն է The mistakes of Modernism, գրողն է Ա. Զ. Քօնրէտ, PH. D., D. D.: Առաջին կէտին մէջ ան կ'ըսէ. «Արդիապաշտութիւնը առաձգական բառ մըն է: Տեսակէտով մը բոլոր հաւատացեալները արդիապաշտ են: Ոչ մէկ անհատ աւետարանական քրիստոնեայի չափ ժամանակին հետ համընթաց քաղող արդիապաշտ մըն է: Անիկա ներկայ պէտքերը միշտ կը համաձայնեցնէ կրօնքի ճշմար-

տութեան հետ: Արդիապաշտութիւնը աշնայիսի բառ մըն է որ կերպով մը շատ մասնաւոր իմաստ մը առած է կրօնական մարդին մէջ. («Րահնիւմա»ի մէջ իմ ալ ըսածս ճիշդ այս էր:» Աւետարանական քրիստոնեաներու կողմանէ խորհուած սկզբունքները իրենց կը յատկացնեն:

«Հիմնապաշտութիւնն ալ նմանապէս առաձգական բառ մըն է որ տարբեր կերպերով կրնայ հասկցուիլ: Հիմնապաշտները այն փոքր մոլեռանդ խմբակն է, որ կը ջատագովէ այսինչ տեսակ քրիստոնէական դաւանանքը, որ այսինչ կերպ անտրամաբանօրէն կը մեկնէ Ս. Գիրքը... Միւս կողմէն Հիմնապաշտութիւնը իր լայն առումով աւետարանական քրիստոնէութիւնը կը ներկայացնէ, Աւետարանի face valueն, տեսանելի մակերեսային արժէքը կ'առնէ...» Ասոնք այդ Տր. Վեր. Ամերիկացիին խօսքերն են: Անոր խօսքերովը հոս կ'եզրակացնենք. «Հիմնապաշտութիւնը՝ մակերեսային եւ տառական իմաստովը կը հասկնայ Աւետարանն ու Ս. Գիրքը, իսկ արդիապաշտութիւնը տառին տակը, տառէն անդին գտնուող միտք և հոգիով կ'ըմբռնէ եւ կը մեկնէ կրօնքը:»

Չափաւոր հիմնապաշտութիւնը և չափաւոր արդիապաշտութիւնը գիրքը կը լրացնեն, եւ պէտք է լրացնեն: Ծայրագոյն հիմնապաշտութիւնը և ծայրագոյն արդիապաշտութիւնը վըստակար են, անոնք մեկ կ'առաջնորդեն դէպի հերետիկոսութիւն և կրօնական թիթեամտութիւն:

Հաւատացեալը միշտ պէտք է յաւաճանայ կրօնական կիանքի մէջ և պէտք է անպատճառ նորոգուի. Պետրոս (Բ. Պետ. I. 5.) հիմնապաշտ հրեաներուն այսպէս կը պատուիրէ. «Ձեր հաւատքին վրայ տառքիւնութիւն և առաքինութեան վրայ գիտութիւն աւել-

յուցէք»։ Պօղոս Հռովմայեցոց մասին կ'ըսէ. «... թէ Աստուծոյ նախանձաւորութիւնը ունին, բայց ոչ թէ գիտութեամբ» (Հռմ. 10. 2)։ Դարձեալ Պօղոս կ'ըսէ. «Եւ հազէք այն նորը գիտութիւնով նորոգուած»։ (Կող. 3. 10)։ Անիկա կը պատուիրէ որ նախահայրերէն ժառանգ մնացած հին հաւատալիքը, անմարսելի մեկնութիւնը, գիտութեամբ նորոգելով իւրացնեն։ Մենք միշտ նոր ճշմարտութիւններ կը գտնենք պրպտելով Անոր կրօնքը, որուն զանձին մէջ պահուած են բոլոր առաքինութիւնն ու գիտութիւնը։ «Երբ Ս. Հոգին գայ բոլոր ճշմարտութիւնը պիտի յայտնէ ձեզի», ոչ թէ ամբողջը մէկէն այլ կամաց կամաց, աստիճանական զարգացումով։ Անպիտի յայտնէ այսօր, վաղը և ընդմիջա, ինչպէս որ անցեալին մէջ յայտնած էր առաքեալներուն և հայրապետներուն։ Ասիկա կրօնքի խորացումն է։ Ահա այս վիճակը քրիստոնէութիւնը կը պատշաճեցնէ ամէն դարու և կլիմայի։ Եթէ կուգիս արդիապաշտութիւն կոչէ այս խնդիրը այս է միայն։

Հետամուտ ըլլանք Անոր մէջ թաքնուած գիտութեան զանձէն նոր նոր գիտեր ընելու։ Միշտ նորոգուիմք, ժամանակին հետ միասին յառաջանիմք։ Պօղոս Առաքեալ Տիմոթիոսին, երիտասարդ քարոզիչին, այս բանը կը պատուիրէ, որ կը պատշաճի ամէն քարոզիչի եւ ամէն դարու հաւատացեալներուն։ Պատուէրը սա է. միշտ ՆՈՐՈԳՈՒԻՄ, միշտ ՅԱՌԱՋԴԻՄԵՆ։

Յիլիսեղիս

Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԴԱՀԻՐԷԻ ՀԱՅ ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ

Գահիրէի մէջ Հայ Աւետ. փոքր համայնք մը կայ, որ սակայն գործօն և օրհնաբեր շրջան մը կ'ապրի ներկայիս։

Անոր նախկին հովիւը, Պատ. Հ. Յ. Համբարձումեան որ երեք տարուան արդիւնաշատ գործունէութենէ մը վերջ մէկ տարուան համար Օպէրլինի մէջ յետ ընթացաւարտի դասընթացքի մը կը հետեւի ներկայիս, «Եկեղեցիին պատմութեան մէջ նոր շրջան մը բացած էր»։ Անոր բացակայութեան միջոցին մէկ տարուան համար հրաւիրուած Պատ. Կ. Փարաճեան նախկին գործունէութեան նոր զարկ մը տուած է՝ վերակազմելով Կիրակնօրեայ Դպրոցը և կազմելով Կ. Դպրոցի ուսուցիչներու կարգ մը։

Պատ. Կ. Փարաճեան իր եռանդուն գործունէութեամբը, ընկերասէր բնութեամբը և հոգեւոր պատգամներով մեծապէս օգտակար եղած է իր եկեղեցիին։

Նոյն եկեղեցիի «Բեթել» Կ. Դպրոցին կողմանէ նոր Տարուան առթիւ իւրաքանչիւր աշակերտին ծնողքին շրջաբերական մը զրկուած է Դպրոցին և ընտանիքին միջև գործակցութեան կապ մը ապահովելու և ամրացնելու համար։

«Բեթել»ի պատիկները այս տարի երեք ոսկի յատկացուցեր են Աթէնքի մէջ վահան Մէնըշեան անուն որբին դպրոցական մէկ տարուան ծախքը հոգալու համար։ Այս փոքրիկները մեծապէս գնահատումի արժանի են իրենց այս վեհ և օրինակելի շարժումին համար։

Գահիրէի Եկեղեցիին Ջանից Ընկերութիւնն ալ աւելի ընդարձակ դաշտի մը վրայ օգտակար ըլլալու գիտաւորութեամբ անցեալ տարի թարգմանաբար հրատարակած էր «Շաբաթական ընթերցանութեան թերթիկներ»։ Ընթերցողներու կողմանէ անոնց գտած գնահատալիք ընդունելութենէն քաջալերուած՝ նոյն Ջանից Ընկերութիւնը որոշած է 200 էջ-նոց զրքոյկի մը ձեւով հրատարակել պատշաճ։ Գիրքը (Daily Companion, Ամենօրեայ Առաջնորդ), պիտի թարգմանուի Փրոֆ. Յ. Թ. Գայանեանի կողմանէ, պիտի ծախուի հետեւեալ գիներով։— Ե-

գրապատիւ և Պաղեստին 5 Եդ. դահ. Սու-
րիա՝ 20 սուրիական զրուշ, ֆրանսա՝ 5
ֆրանկ, Յունաստան՝ 15 Տրախմի, ու-
րիշ երկիրներ՝ մէկ Շիլինկ կամ 25 սէնթ:
Ընտանեկան պաշտամունքի կամ անհա-
տական աղօթքներու պահուն շատ օգ-
տակար է գործածել այս առաջնորդող
գիրքը: Ստանալու համար գրմիւ հե-
տեւեալ հասցէին. —

Mr. K. H. Guzelimian
P. O. B. 425
Cairo [Egypt]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԿԱՆՁ ՄԸ ՄԱՀԸ

Յաւով կ'իմանանք թէ Միս Սալմընտ,
Մարաշի Անգլիական Որբանոցներուն
նախկին տնօրէնուհին, Սկովտիոյ մէջ
մեռած է 83 տարեքին մէջ:

Ամերիկաբնակ մի քանի բարերար
Հայեր Նոր Տարուայ և Ս. Ծնունդի առ-
թիւ Հալէպի կարօտներուն համար կոկիկ
գումար մը նուիրած են, որ ծախսուած
է Համրտիյէի և Ազիզիյէի եկեղեցիներու
կարօտներուն եւ թուրքիայէն նոր հաս-
նող գաղթականներուն համար:

ՀԱԼԷՊ, ԱԶԻԶԻՅԵՒ ՀԱՅ ԱՒԵՏ.
ԵԿԵՂԵՑԻՒ ԿԵԱՆՔԷՆ

Մանկանց Կիրականօրեայ Դպրոցին
վկայականաց բաշխումին հանդէսը կա-
տարուեցաւ, Դեկտեմբեր 24, 1929ին,
երբ 17 աղջիկներ վկայականներ ստա-
ցան: Անցեալ տարի ալ մանչերու կարգ
մը վկայական առած էին: Ասկէ ետքը,
սակայն, ամէն տարի թէ՛ մանչերու և
թէ՛ աղջիկներու միասին վկայականներ
պիտի տրուին: Ուսուցչական կազմը և
տնօրէնութիւնը ամէն զնահատումիս ար-
ժանի են իրենց ջանքերուն համար:

Աղջկանց Զանից Ընկերութեան կող-
մանէ, Յունվ. 8ի գիշերը կենդանի

պատկերներու ներկայացում մը տրուե-
ցաւ զրաւիչ և յաջող կերպով, որմէ շատ
գոհ մնացած է ներկայ հոծ բաղմութիւ-
նը:

Ասկէ առեն մ'առաջ ալ Երիտասարդ-
ներու Զանից Ընկերութեան կողմէ Ս.
Դրիպոր Լուսաստիւնի տրամբ ներկայաց-
ուած էր: Այս ներկայացումը, որ երկար
և մեծ ջանքերու արդիւնքն էր, մի ծա-
պիս զնահատուած է ներկաներոյն կող-
մանէ:

Ճշդում. — Ազիզիյէի եկեղեցիին հիւք-
տրական լոյսով լուսաւորման համար
նախաձեռնարկ քայլը առնուած է Տոքթ.
Կ. Պապիկեանի կողմանէ, որ 10 օսմ.
ոսկի նուիրած է: Ընդհանուր ծախքը
եղած է 55 օսմ. ոսկի, (ոչ թէ 16' ինչ-
պէս առաջ գրած էինք), որուն 44.5 օսմ.
ոսկին (ոչ թէ 50ը) նուիրուած է Տոքթ.
Ա. Ալթունեանի կողմանէ:

Նոր Տարուան և Ս. Ծնունդի առթիւ
Հալէպի Հայ Աւետ. եկեղեցիներուն մէջ
կատարուած պաշտամունքներուն՝ մեծ
բաղմութիւններ ներկայ գտնուած են:
Տր. Ճ. Է. Մէրիլ Համրտիյէի և Վեր. Կ.
Յարութիւնեան Ազիզիյէի եկեղեցիին մէջ
Ծնունդի քարոզը տուած են:

ՄՍՍՍԱՆՔ

«Ամենօրեայ Առաջնորդ»ի առաջին
պրակը, հրատարակուած Գահրէթի Հայ
Աւետ. եկեղեցւոյ Զանից Ընկերութեան
կողմանէ, թարգմանիչն է Փրոֆ. Յ. Թ.
Դայաեան: Ընտանեկան և անհատական
աղօթքներու և խորհրդածութեանց հա-
մար լաւ առաջնորդ մը: Դիմել՝ վերը
յիշուած հասցէին:

صاحب الامتياز و مدير المسئول
قسيس قريبت هاروتونيان